ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ 1
2013 թ. հունվարի 10–16

2013 թ. հունվարի 23

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

- Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրությունները տեղի կունենան 2013 թվականի փետրվարի 18-ին՝ Սահմանադրության դրույթների համաձայն: Եթե թեկնածուներից որևէ մեկը չստանա ձայների բացարձակ մեծամասնություն առաջին փուլում, ապա երկու շաբաթ անց ձայների առավել քանակ ստացած երկու թեկնածուների միջև կանցկացվի ընտրությունների երկրորդ փուլ:

- Ներառական կերպով գրանցվել է ութ թեկնածու: Վեց այլ թեկնածու չեն վճարել պահանջվող ընտրագրավի գումարը, և մեկը ինքնաբացարկ է հայտարարել մինչև գրանցման վերջնաժամկետը:

- Այս ընտրությունները կլինեն առաջին նախագահական ընտրությունները, որոնք կանցկացվեն 2011 թվականի մայիսին ընդունված նոր Ընտրական Օրենսգրքի համաձայն: Նոր Օրենսգիրքը գնահատվել է իբրև համապարփակ և տրամադրում է ամուր հիմքեր ժողովրդավարական ընտրությունների անցկանցման համար: Միաժամանակ, Օրենսգրքում դեռ կան հատվածներ, որոնք բարելավման կարիք ունեն:

- Ընտրությունները կանցկացվեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ), 41 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների (ԸԸՀ) և 1,988 Տեղամասային ընտրական հանձնաժողովների (ՏԸՀ) կողմից: ԿԸՀ-ն ակտիվորեն նախապատրաստվում է ընտրություններին, և մինչ օրս օրենքով սահմանված որևէ վերջնաժամկետ չի խախտվել:

- Ներկայումս գրանցված է մոտ 2.5 մլն. ընտրող: Նախնական ընտրացուցակները տեղադրվել են համացանցում և ընտրողները կարող են ճշտումներ կամ լրացումներ կատարել ընտրացուցակների մեջ:

- Պաշտոնական նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածն է հունվարի 21-ից մինչև փետրվարի 16-ի կեսգիշեր: Ընտրական օրենսգիրքը նախատեսում է մի շարք կանոններ, որոնք ապահովում են բոլոր թեկնածուներին քարոզարշավի անցկացման համար հավասար հնարավորություններով: Նախընտրական քարոզչական որոշ ակտիվություն արդեն առկա էր նախկան քարոզարշավի պաշտոնական մեկնարկը՝ հիմնականում ինտերնետային կայքերի և սոցիալական ցանցերի միջոցով:

- Ընտրական օրենսգիրքը ներկայանում է որպես պաշտոնական քարոզարշավի լուսաբանումը կարգավորող հիմնական իրավական հիմք: Այն ենթադրում է հանրային

հեռարձակողների կողմից թեկնածուներին անվճար եթերաժամի տրամադրում և պարտադրում է նշված լրատվամիջոցներին ապահովել առանց խտրականության հավասար պայմաններ, ինչպես նաև անաչառ և անկողմնակալ լուսաբանում լուրերի թողարկման ժամանակ: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը պատասխանատու է նախընտրական քարոզարշավի լուսաբանումը վերահսկելու համար:

- Ընտրական վեճերը լուծվում են ընտրական հանձնաժողովներում և վարչական դատարանում: Մինչ օրս ԿԸՀ-ն և վարչական դատարանը ստացել են հինգ բողոք, որոնք մերժվել են կամ ընդատության պակասի պատճառով կամ ըստ էության:

- ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) սկսել է Ընտրությունների դիտորդական առաքելության աշխատանքները հունվարի 10-ին և ներառում է Երևանում տեղակայված 13 անդամներից բաղկացած հիմնական թիմ և երկրի տարածքով մեկ տեղաբաշխված 24 երկարաժամկետ դիտորդներ:

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրության դրույթների համաձայն 2012 թվականի դեկտեմբերի 8-ին ԿԸՀ-ն հայտարարել է, որ նշանակված նախագահական ընտրությունները կկայանան 2013 թվականի փետրվարի 18-ին: ՀՀ Վարչապետի հրավերի հիման վրա ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելությունը (ԸԴԱ) սկսել է իր աշխատանքները հունվարի 10-ին: ԸԴԱ-ն, տիկին դեսպան Հայդի Թալիավինիի ղեկավարությամբ, բաղկացած է հիմնական անձնակազմում ընդգրկված 13 անդամներից և հանրապետության 10 մարզերում հունվարի 16-ին տեղաբաշխված 24 երկարաժամկետ դիտորդներից: ԸԴԱ-ի անդամները ներկայացնում են 21 ԵԱՀԿ մասնակից պետություններ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը հայցելու է ԵԱՀԿ անդամ երկրներից 250 կարճաժամկետ դիտորդներ՝ քվեարկության ընթացքը, ձայների հաշվման գործընթացը և քվեարկության արդյունքների աղյուսակավորումը դիտարկելու նպատակով:

III. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վերջին խորհրդարանական ընտրությունները տեղի են ունեցել 2012 թվականի մայիսին: Հայաստանի իշխող Հանրապետական կուսակցությունը, գործող նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ, ստացել է 131-ից 69 խորհրդարանական մանդատ: Ազգային ժողովում ներկայացված այլ կուսակցություններն են՝ Բարգավաճ Հայաստան կուսակցությունը (ԲՀԿ, 37 մանդատ), Օրինաց երկիր կուսակցությունը (ՕԵԿ, 6 մանդատ), Հայ Յեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ, 6 մանդատ), Ժառանգություն (5 մանդատ) և Հայ ազգային կոնգրես դաշինքը (ՀԱԿ, 7 մանդատ): Հայաստանի Հանրապետական և Օրինաց երկիր կուսակցությունները կազմում են ներկայիս կոալիցիոն կառավարությունը:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն դիտարկել է 2012 թվականի մայիսին կայացած խորհրդարանական ընտրությունները և իր վերջնական զեկույցում եզրակացրել, որ ընտրությունները «բնորոշվեցին մրցակցային, ակտիվ և հիմնականում խաղաղ նախընտրական քարոզչությամբ, ինչը, սակայն, ընդգծվեց գործընթացների ամբողջականության նկատմամբ վստահության ցածր մակարդակով: Ընտրություններին մասնակիցների կողմից

նախընտրական քարոզչության դրույթների որոշ խախտումներ, այդ թվում, վարչական միջոցների օգտագործումը և ընտրողների ընտրության ազատությունը սահմանափակելու փորձերը, ստեղծել էին անհավասար մրցակցային դաշտ և հակասում էին ԵԱՀԿ պարտավորություններին:»[1]

Խորհրդարանական ընտրություններից հետո Հանրապետության Նախագահի կարգադրությամբ ստեղծվել է կառավարության ներկայացուցիչներից և այլ պետական պաշտոնյաներից բաղկացած աշխատանքային խումբ:[2] Աշխատանքային խմբին հանձնարարվել է ուսումնասիրել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի վերջնական զեկույցում, ինչպես նաև դիտորդական առաքելություն իրականացրած այլ կազմակերպությունների ներկայացված առաջարկությունները և պատրաստել գործողությունների ծրագիր՝ նշված առաջարկություններն իրականացնելու համար: Աշխատանքային խմբի գործունեության արդյունքները ներկայացվել են 2012 թվականի հոկտեմբերին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ին, որն առաջարկել է զերծ մնալ օրենսդրության մեջ սկզբունքային փոփոխություններ կատարելուց առաջիկա ընտրությունների նախաշեմին:

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ և ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2011 թվականի մայիսին, երբ ընդունվել է Ընտրական նոր օրենսգիրք, ընտրական իրավական դաշտը ենթարկվել է էական բարեփոխումների: Առաջիկա ընտրությունները առաջին նախագահական ընտրություններն են, որոնք անցկացվելու են նոր Օրենսգրքի համաձայն: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Եվրախորհրդի Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկյան հանձնաժողով) գնահատել են Օրենսգիրքը որպես համապարփակ և ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու հաստատուն հիմք:[3] Միևնույն ժամանակ, մինչ նոր Օրենսգիրքը անդրադառնում է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկյան հանձնաժողովի կողմից նախկինում արված մի շարք առաջարկությունների, Օրենսգրքում առկա են հատվածներ, որոնք դեռ բարելավման կարիք ունեն:[4]

Ընտրություններին առնչվող օրենսդրական այլ փաստաթղթերի շարքում են Սահմանադրությունը (2005 թ.), Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը (2002 թ., վերջին անգամ փոփոխված 2012 թվականին), Հավաքների ազատության մասին նոր օրենքը (2011 թ.) և ԿԸՀ-ի հավելյալ կանոնակարգումները և իրավական մեկնաբանությունները: 2011

---

1 Հայաստանի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի այլ զեկույցները տես՝ http://www.osce.org/odihr/elections/armenia:

2 Աշխատանքային խումբը գլխավորում է նախագահի աշխատակազմի ղեկավարը և նրա կազմում ընդգրկված են ՀՀ Արդարադատության նախարարը, Արտաքին գործերի փոխնախարարը, ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահը, ԱԺ պետահրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը, Նախագահի իրավական հարցերով օգնականը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը, ՀՀ ոստիկանության պետի տեղակալը և վճռաբեկ դատարանի նախագահը:

3 Ազգային ժողովի խնդրանքով, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և Վենետիկյան հանձնաժողովը Ընտրական նոր օրենսգրքի համատեղ իրավական ուսումնասիրություն է կատարել և հրապարակել Համատեղ վերջնական կարծիք 2011 թվականի Ընտրական օրենսգրքի վերաբերյալ, տես՝ http://www.osce.org/odihr/elections/84269:

4 Տես՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ և Վենետիկյան հանձնաժողովի համատեղ կարծիքը Ընտրական օրենսգրքի վերաբերյալ և 2012 թվականին կայացած խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի վերջնական զեկույցը:

թվականին փոփոխություններ են կատարվել Վարչական իրավախախտումների օրենսգրքում և Քրեական օրենսգրքում, ըստ որի բարձրացվել են ընտրությունների ժամանակ կատարված իրավախախտումների համար նախատեսված տուգանքների չափերը և ազատազրկման ժամկետները, ինչպես նաև սահմանվել են ընտրությունների հետ կապված լրացուցիչ իրավախախտումներ: Վարչական վարույթի օրենսգիրքը, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին և Սահմանադրական դատարանի մասին օրենքները կանոնակարգում են ընտրությունների հետ կապված բոլոր վեճերի լուծման գործընթացը:

Ընտրելու իրավունք ունեն քվեարկության անցկացման օրը Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիները: Դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող քաղաքացիները ընտրելու իրավունք չունեն:

Նախագահը ընտրվում է հինգ տարվա ժամկետով՝ մեծամասնական ընտրակարգի միջոցով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հանրապետության Նախագահի պաշտոնում: Առաջին փուլում Հանրապետության Նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ է քվեարկել բոլոր թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի կեսից ավելին: Եթե թեկնածուներից ոչ մեկին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ, ապա քվեարկությունից հետո՝ 14-րդ օրը, անցկացվում է Հանրապետության Նախագահի ընտրության երկրորդ փուլ՝ երկու թեկնածուների միջև, որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ: Հանրապետության Նախագահի ընտրության երկրորդ փուլում Հանրապետության Նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

V. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Նախագահական ընտրությունները կազմակերպվում են ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգով, որոնք բաղկացած են ԿԸՀ-ից, 41 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից (ԸԸՀ) և 1,988 Տեղամասային ընտրական հանձնաժողովներից (ՏԸՀ):[5] Գրանցված թեկնածուները իրավասու են նշանակելու վստահված անձանց յուրաքանչյուր հանձնաժողովում:

ԿԸՀ-ն բաղկացած է յոթ անդամներից: Ներկայիս անդամները նշանակվել են Նախագահի կողմից 2011 թվականի հուլիսին՝ Մարդու իրավունքների պաշտպանի (3 անդամ), Վճռաբեկ դատարանի նախագահի և Փաստաբանների պալատի նախագահի (2 անդամ յուրաքանչյուրը) առաջադրմամբ: 41 ԸԸՀ-ները մշտական գործող մարմիններ են, որոնց անդամները նշանակվել են 2011 թվականի օգոստոսին ԿԸՀ-ի կողմից՝ ԸԸՀ անդամության համար ինքնաառաջադրված քաղաքացիներից: Ընտրական օրենսգիրքը նախատեսում է գենդերային քվոտա ԿԸՀ-ի և ԸԸՀ-ի կազմի համար, որը պահանջում է, որ հանձնաժողովի կազմում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի երկուսից: ԿԸՀ-ի ներկա անդամներից երեքը և ԸԸՀ-ի անդամների 32 տոկոսը կանայք են:

1,988 ընտրական տեղամասերում քվեարկությունը և ձայների հաշվարկը կազմակերպվելու է ՏԸՀ-ների կողմից: ՏԸՀ-ի երկու անդամները նշանակվում են համապատասխան ԸԸՀ-ի

[5] Ընտրական տեղամասը կարող է ունենալ մինչև 2,000 ընտրող:

կողմից, մինչդեռ Ազգային Ժողովում ներկայումս ներկայացված յուրաքանչյուր կուսակցություն կամ դաշինք կարող է նշանակել ՏԸՀ-ի մնացած վեց անդամներից մեկին: ՏԸՀ կազմավորման վերջնաժամկետն է հունվարի 24-ը: Վերջնաժամկետից հետո մնացած թափուր տեղերը լրացվելու են ըստ ԸԸՀ-ի նախագահի նշանակման: Նշանակվելու համար ՏԸՀ-ների անդամները պետք է հանձնեն ստուգարք և ԿԸՀ-ի կողմից ստանան որակավորման վկայագիր:

ԿԸՀ-ի և ԸԸՀ-ի նախագահները, տեղակալները և քարտուղարները ընտրվում են հանձնաժողովի անդամներից: Ընտրական օրենսգրքի համաձայն, հունվարի 15-ին ԿԸՀ-ն բաշխել է ԸԸՀ-ների և ՏԸՀ-ների նախագահների և քարտուղարների պաշտոնները կուսակցությունների և դաշինքների ներկայացուցիչների միջև՝ Ազգային Ժողովում նրանց ունեցած մանդատներին համապատասխան:

ԿԸՀ-ն հաստատել է ընտրությունների հիմնական ընթացակարգային կանոնները և պաշտոնական փաստաթղթերի ստանդարտ ձևերը՝ տեղադրելով իր կայքէջում ընտրություններից բավական ժամանակ առաջ: ԿԸՀ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ հանրության վստահությունը բարձրացնելու նպատակով քվեարկության արդյունքները ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի կտեղադրի իր կայքէջում՝ ԸԸՀ-ի կողմից քվեարկության արձանագրությունները տրամադրելուց հետո: ԿԸՀ-ն նաև մտադրված է կազմակերպել ընտրական հանձնաժողովների համար ավելի հիմնավոր վերապատրաստման դասընթացներ քվեարկության արդյունքների հաշվարկման և աղյուսակավորման ընթացակարգի վերաբերյալ, ինչպես նաև պլանավորում է անցկացնել հանրային իրազեկում ընտրական ընթացակարգի շուրջ՝ ուղղված ընտրողների տարբեր խմբերին, այդ թվում ուսանողներին, զինվորական աշխատակազմին և ոստիկանությանը: ԿԸՀ-ն նաև տեղեկացրել է ԸԴԱ-ին, որ նախապատրաստում է հանրային պրեզենտացիա և հատուկ թանաքի փորձարկում, որը պետք է օգտագործվի ընտրության օրը ընտրողների անձնագրերը դրոշմակնքելու համար՝ բազմակի քվեարկության դեմ որպես երաշխիք:[6]

VI. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Ընտրողների գրանցումը պասիվ է և կազմվում է բնակչության պետական ռեգիստրի հիման վրա: Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը (ԱՎՎ) պատասխանատու է ընտրողների համապետական էլեկտրոնային ռեգիստրի մշտական վարման համար:[7] Ընտրողների ռեգիստրի թվային և որոնման համակարգով հագեցած տարբերակը տեղադրվել է ԿԸՀ-ի կայքէջում հունվարի 8-ին՝ օրենքով սահմանված կարգով: ԿՀԸ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ հունվարի 9-ի դրությամբ ընտրողների ընդհանուր թիվը 2,510,897 է:

Ընտրացուցակները կազմվում են ընտրողների ռեգիստրի հիման վրա: Ընտրողների նախնական ցուցակները ըստ ընտրական տեղամասերի տեղադրված են ԱՎՎ-ի կայքում ներբեռնման հնարավորությամբ: Քաղաքացիները կարող են դիմել հանրապետության ողջ

---

6 Ընտրական օրենսգրքի համաձայն անձնագիրը կնքելուց հետո կնիքը պետք է տեսանելի լինի առնվազն 12 ժամ:

7 Ընտրողների ռեգիստրը թարմացվում է տարեկան երկու անգամ՝ հունիսին և նոյեմբերին: ԱՎՎ-ն տրամադրում է ընտրողների թարմացված ռեգիստրը ԿԸՀ-ին:

տարածքում գործող 61 ԱՎՎ գրասենյակներ՝ ընտրողների ցուցակներում անճշտություններն (այդ թվում այլ ընտրողների տվյալները) ուղղելու համար: Այն ընտրողները, որոնք ցանկանում են քվեարկել այն համայնքներում, որտեղ մշտապես չեն բնակվում, կարող են դիմել ԱՎՎ՝ իրենց տվյալները ժամանակավորապես տեղափոխելու համար:

Ընտրական հատուկ ցուցակներ են կազմվել զիմվորական անձնակազմի, կալանավայրերում նախնական կալանքի տակ գտնվող անձանց, ինչպես նաև ոստիկանության և Ազգային անվտանգության ծառայության աշխատակազմի համար, որոնք հեռու են գտնվում իրենց բնակության վայրից: Արտասահմանում տեղակայված դիվանագիտական աշխատակազմի 243 ծառայող և նրանց ընտանիքների անդամները կարող են քվեարկել համացանցի միջոցով մինչև փետրվարի 18-ը:[8]

VII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ և ԳՐԱՆՑՈՒՄ

Նախագահական ընտրություններին որպես թեկնածու առաջադրվելու համար անձը պետք է ունենա ընտրելու իրավունք, լինի 35 տարեկանը լրացած, չունենա այլ երկրի քաղաքացիություն, լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացի և վերջին 10 տարվա ընթացքում մշտապես բնակվի Հայաստանում:

Թեկնածուները կարող են առաջադրվել քաղաքական կուսակցությունների կողմից կամ ինքնաառաջադրվել: Թեկնածուների առաջադրումը տեղի է ունեցել 2012 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2013 թվականի հունվարի 4-ը, որին հետևել է 10-օրյա ժամանակահատված՝ նախատեսված թեկնածուների գրանցման համար: Թեկնածուները պետք է ներկայացնեին ԿԸՀ-ին դիմում՝ անձնական տվյալներով, ինչպես նաև ընտրագրավի վճարման անդորրագիրը, որը կազմում է 8 միլիոն դրամ (մոտ 15,000 եվրո).[9] Ընտրական օրենսգիրքը տրամադրում է թեկնածուներին լրացուցիչ 48 ժամ՝ անհրաժեշտ փաստաթղթերը ամբողջականացնելու համար:

Թեկնածուների գրանցումը անցել է ներառական կերպով: Ընդհանուր 15 առաջադրում է ներկայացվել ԿԸՀ մինչև օրենքով սահմանված վերջնաժամկետը: ԿԸՀ-ն գրանցել է ութ թեկնածուների, որոնք տրամադրել են փաստաթղթերի ամբողջական փաթեթը և վճարել ընտրագրավը:[10] Առաջադրված թեկնածուներից մեկը ինքնաբացարկ է հայտարարել, և վեցը չեն գրանցվել ընտրագրավը չվճարելու պատճառով, այդ թվում նաև միակ կինը՝

---

8 2012 թվականի հունվարի 31-ին ԿԸՀ-ի կողմից ընդունված թիվ 19 որոշումը սահմանում է համացանցով քվեարկելու ընթացակարգը:

9 Դիմումին կից, առաջադրված թեկնածուներից պահանջվել է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝ կուսակցության համագումարին կամ մշտական գործադիր մարմնի կողմից թեկնածուի առաջադրման մասին ընդունված որոշումը, կուսակցության կանոնադրությունը, գրավոր համաձայնություն կուսակցության կողմից առաջադրվելու համար, անձը հաստատող փաստաթղթի պատճեն, հանրապետությունում վերջին 10 տարվա ընթացքում մշտապես բնակության և քաղաքացիության տեղեկանք և թեկնածուի լիազորված ներկայացուցչի անձնական տվյալները: Առաջին երեք փաստաթղթերը պետք է ներկայացնեն միայն կուսակցությունների կողմից առաջադրվող թեկնածուները:

10 Գրանցված թեկնածուներն են՝ Հրանտ Բագրատյանը, Անդրիաս Ղուկասյանը, Արամ Հարությունյանը, Պարույր Հայրիկյանը, Ռաֆֆի Հովհաննիսյանը, Արման Մելիքյանը, Սերժ Սարգսյանը և Վարդան Սեդրակյանը:

առաջադրված թեկնածուների ցանկում:[11] Օրենքը թույլ է տալիս դատավճիռով թեկնածուի գրանցումը անվավեր ճանաչել ԿԸՀ-ի դիմումի հիման վրա՝ քարոզարշավի կամ քարոզարարշավի ֆինանսավորման պահանջները խախտելու պատճառով:

VIII. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Պաշտոնական քարոզարշավը մեկնարկել է հունվարի 21-ին և ավարտվելու է փետրվարի 16-ի կեսգիշերին: Ընտրական օրենսգիրքը սահմանում է մի շարք կանոններ, որոնք ուղղված են բոլոր թեկնածուներին հավասար պայմաններ ապահովելու համար: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավորվում են մրցակիցներին անվճար հիմքերով և հավասար պայմաններով տրամադրել տարածքներ՝ քարոզչության ընթացքում միջոցառումներ անցկացնելու համար: Ընտրական օրենսգիրքը նաև սահմանում է, որ քարոզչությունը չի սահմանափակվում քարոզարշավի համար նախատեսված պաշտոնական ժամանակահատվածով, բացառությամբ քվեարկությանը նախորդող 24-ժամյա լռությունը:

Նախագահական թեկնածուներից միայն երկուսն են առաջադրվել քաղաքական կուսակցությունների կողմից. գործող Նախագահ Սերժ Սարգսյանը առաջադրված Հայաստանի Հանրապետական կուսակցության և Հրանտ Բագրատյանը առաջադրված Ազատություն կուսակցության կողմից: Չնայած, որ վերջինս ՀԱԿ-ի անդամ է, ՀԱԿ-ը չի սատարում նրա թեկնածությունը: Մնացած թեկնածուները մասնակցելու են ընտրարշավին որպես ինքնաառաջադրված թեկնածուներ, այդ թվում նաև Ժառանգության կուսակցության առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը: Այլ խորհրդարանական կուսակցությունները (ԲՀԿ, ՀԱԿ և ՀՀԴ) որոշել են թեկնածուներ չառաջադրել:[12]

Նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկին նախորդող ժամանակահատվածում, քարոզչությունը հիմնականում տարվում էր առցանց լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի միջոցով: Թեկնածուների մեծամասնությունը հրապարակավ հայտարարել են առաջիկա ընտրությունների կարևորության մասին, մինչդեռ ըստ տեղեկությունների, նրանցից երկուսը հորդորում են բոյկոտել ընտրությունները:[13]

IX. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

Հանրապետությունում գործում է 96 հեռուստաալիք՝ ներառյալ երկրի ամբողջ տարածքում հեռարձակվող 6 ալիք, 20 ռադիոընկերություններ, մոտավորապես 90 տպագիր մամուլ և բազմաթիվ առցանց լրատվամիջոցներ: Հեռուստատեսությունը տեղեկատվության ամենակարևոր աղբյուրն է, հատկապես Երևանից դուրս: Հանրային հեռուստատեսությունը՝ Հ1-ը, հասանելի է երկրի ամբողջ տարածքում և համարվում ամենաազդեցիկ

[11] Ըստ օրենքի, գրանցումը կարող է մերժվել եթե ներկայացված փաստաթղթերը թերի են կամ կեղծված:

[12] Ռուբեն Այվազյանը, ԲՀԿ անդամ, ներկայացրել էր իր թեկնածությունը ԿԸՀ, բայց հետագայում ինքնաբացարկ հայտարարել:

[13] Անդրիաս Ղուկասյանը նամակ է հղել նախագահական ընտրություններին մասնակցող այլ թեկնածուներին, ըստ որի նա կոչ է անում նրանց համատեղ ինքնաբացարկ հայտարարել: Նա նույնպես հայտարարեց հացադուլ՝ պահանջելով գործող Նախագահի գրանցումը չեղյալ համարել: Արամ Հարությունյանը առաջարկել է, որ բոլոր թեկնածուները, բացի գործող Նախագահից, ինքնաբացարկ հայտարարեն ընտրություններից տասը օր առաջ:

լրատվամիջոցներից մեկը: Մինչ տպագիր մամուլը պայքարում է սահմանափակ շրջանառության և նվազող ազդեցության դեմ, առցանց լրատվամիջոցների, այդ թվում քաղաքականությանն ուղղված կայքերի ընթերցողների թիվն աճում է: Խոսքի ազատության հարցերով զբաղվող որոշ միջազգային կազմակերպություններ շարունակում են մի շարք մտահոգություններ նշել, ներառյալ հեռարձակող լրատվամիջոցների բազմազանության պակասի և շարունակական ինքնագրաքննության խնդիրները:[14]

Սահմանադրությունն ապահովում է խոսքի և տեղեկատվության ազատությունը: Որպես դրական զարգացում 2010 թվականի մայիսին վիրավորանքն ու զրպարտությունը ապաքրեականացվել են: 2011 թվականի նոյեմբերին Սահմանադրական դատարանը որոշել է, որ լրատվամիջոցները չեն կարող պատասխանատվություն կրել «փաստերի քննադատական գնահատականի» և «գնահատող դատողությունների» համար: Սույն որոշումը, որը ողջունվել է Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի կողմից,[15] զգալիորեն սահմանափակել է լրատվամիջոցների նկատմամբ մեծ տուգանքների կիրառումը՝ զրպարտության վերաբերյալ քաղաքացիական դատավարություններում:

«Հեռուստատեսության և Ռադիոյի մասին» ՀՀ օրենքն արգելում է գրաքննությունը, և մի շարք կանոններ է սահմանում հեռարձակող լրատվամիջոցներով քարոզարշավի լուսաբանման համար: Այնուամենայնիվ, ընտրական օրենսգիրքը մնում է միակ իրավական հիմքը լրատվամիջոցներով նախընտրական քարոզարշավ իրականացնելու համար: Այն կարգավորում է հեռարձակող լրատվամիջոցների գործողությունները. և՛ հանրային և՛ մասնավոր լրատվամիջոցների լրատվական հաղորդումները պարտավոր են ներկայացնել անաչառ և անկողմնակալ տեղեկատվություն թեկնածուների նախընտրական քարոզարշավի վերաբերյալ և տրամադրել հավասար և արդար պայմաններ: Քարոզարշավի հեռարձակումը հեռուստատեսությամբ և ռադիոյով պետք է հստակորեն սահմանվի որպես այդպիսին:

Յուրաքանչյուր թեկնածու իրավունք ունի ստանալու մինչև 60 րոպե և 120 րոպե անվճար եթերաժամ՝ համապատասխանաբար հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով, ինչպես նաև գնել մինչև 120 րոպե և 180 րոպե վճարովի եթերաժամ՝ համապատասխանաբար հանրային հեռուստատեսությամբ և հանրային ռադիոյով: Հունվարի 15-ին՝ թեկնածուների գրանցման ավարտից մեկ օր անց, ԿԸՀ-ն հաստատել է անվճար եթերաժամի գրաֆիկը, ինչպես նախատեսված է Ընտրական օրենսգրքով: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը պարտավոր է վերահսկել լրատվամիջոցների համապատասխանությունը իրավական դրույթներին, այդ թվում իր կողմից իրականացվող լրատվամիջոցների մոնիտորինգի միջոցով:

Հունվարի 11-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն սկսել է 6 հեռուստաալիքների, 2 ռադիոալիքների, 3 օրաթերթերի և 2 առցանց լրատվամիջոցների մոնիտորինգը՝ քանակական և որակական վերլուծության միջոցով:[16] 2012 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը Երևանի

---

14 Լրագրողներ առանց սահմանների, Մամուլի ազատության վարկանիշ, 2011-2012 թթ. ի թիվս այլ զեկույցների, տես՝ http://en.rsf.org/IMG/CLASSEMENT_2012/C_GENERAL_ANG.pdf:

15 2011 թվականի նոյեմբերի 24-ի պարբերական զեկույցը ԵԱՀԿ Մշտական հանձնաժողովին, տես՝ http://www.osce.org/fom/85336:

16 Հ1 (հանրային հեռարձակող), Հ2, Արմենիա հեռուստատեսություն, Շանթ, Կենտրոն և Երկիր Մեդիա (հանրապետության ամբողջ տարածքում հեռարձակվող հեռուստաալիքներ), Հանրային Ռադիո,

մամուլի ակումբը, որը տեղական հասարակական կազմակերպություն է, իրականացրել է լրատվամիջոցների՝ 7 հեռուստաալիքների և 2 ռադիոալիքների մոնիտորինգ. այն ֆինանսավորվել է Եվրամիության և իրականացվել ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից: Կազմակերպությունը նաև նպատակ ունի մոնիտորինգ իրականացնել պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածում:

X. ԲՈՂՈՔՆԵՐ և ԴԻՄՈՒՄՆԵՐ

Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները և անգործությունը կարող են բողոքարկվել վերադաս հանձնաժողովում, մինչդեռ ԿԸՀ-ի գործողությունների դեմ ուղղված դիմումները գտնվում են Վարչական դատարանի ընդատության ներքո: ԿԸՀ-ն կարող է դիմել Վարչական դատարան թեկնածուներին գրանցումից հանելու՝ քարոզարշավի կամ քարոզարշավի ֆինանսավորման իրավախախտումների դեպքում: Ընտրավեճերի վերաբերյալ Վարչական Դատարանի կայացրած որոշումները բեկման ենթակա չեն: Ընտրացուցակներին ճշգրտման վերաբերյալ գործերը քննում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները և նրանց որոշումները վերանայման ենթակա չեն: Սահմանադրական դատարանը գնահատում է ոչ միայն իրավական դրույթների սահմանադրականությունը, այլ նաև քննում ընտրությունների վերջնական արդյունքներին վերաբերող ցանկացած բողոք:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն տեղեկացել է, որ առաջադրված թեկնածուների կողմից ընտրագրավի վերաբերյալ երկու բողոք է ներկայացվել ԿԸՀ:[17] Վարչական դատարանը ստացել է երեք բողոք, որոնք վերաբերվում են թեկնածուների գրանցմանը, որոնք մերժվել են ընդատության պակասի պատճառով կամ ըստ էության:[18]

Գլխավոր դատախազությունը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրել է աշխատանքային խումբ ստեղծելու մասին, որը զբաղվելու է ընտրությունների հետ կապված իրավախախտումներով, ինչպես նաև ընտրությունների օրը գործելու է թեժ գիծ՝ ստացվող բողոքների համար:

Ի լրումն, Մարդու իրավունքների պաշտպանը տեղեկացրել է, որ հանրապետության տարածքում գործող վեց տարածաշրջանային գրասենյակները քարոզարշավի ընթացքում և քվեարկության օրը ընդունելու են ընտրությունների հետ կապված բողոքներ և նպաստել դրանց լուծմանը:

Ռադիո Ազատություն (ռադիոալիքներ), Հայաստանի Հանրապետություն (պետության ֆինանսավորմամբ օրաթերթ), Առավոտ, Հայկական Ժամանակ (թերթեր), www.news.am, www.1in.am (առցանց լրատվամիջոցներ):

17 Նախագահական թեկնածուներից մեկը դիմել է ԿԸՀ առաջարկով իջեցնել ընտրագրավի չափագինը մինչև 50,000դրամ (մոտ 100եվրո): ԿԸՀ մերժեց դիմումը այն հիմնավորմամբ, որ գրավի չափագինը սահմանված է Ընտրական օրենսգրքով և, հետևաբար, ԿԸՀ-ի իրավասությունից դուրս է: Մյուս բողոք մերժվել է, քանի, որ մինչ այդ Վարչական դատարանը արդեն կայացրել էր որոշում այդ բողոքի վերաբերյալ:

18 Մեկ այլ բողոքով վիճարկվում էր թեկնածուների գրանցման վերաբերյալ, ըստ որի ընտրագրավի նախապայմանը անհաղթահարելի խոչընդոտ է ընտրություններին մասնակցելու համար: Այն ուղարկվել է Սահմանադրական դատարանին որպես իրավասու մարմին: Մնացած երկու բողոքներում նշվում էր, որ ԱՎՎ-ն առանց հիմնավոր պատճառաբանության մերժել է դիմողներին տրամադրել 10-տարվա մշտական բնակության տեղեկանք: Երկուսն էլ մերժվել են ըստ էության:

XI. ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐ

Ընտրական օրենսգիրքը սահմանում է ընտրությունների միջազգային և տեղական դիտարկում: Տեղական դիտորդները կարող են առաջադրվել հասարակական միավորումների կողմից, որոնք զբաղվում են ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին առնչվող հարցերով: Նրանք պարտավոր են հանձնել ԿԸՀ-ի կողմից կազմակերպվող ստուգարք՝ տեղական դիտորդի որակավորում ստանալու համար: Վկայականների վավերականության ժամկետը երեք տարի է: Հունվարի 16-ի դրությամբ 6 տեղական կազմակերպություններ առաջադրել են 958 դիտորդ: Հավատարմագրման վերջնաժամկետը փետրվարի 8-ն է:

Ընտրական օրենսգրքի 30.5 հոդվածի համաձայն, ԿԸՀ-ը կարող է չեղյալ համարել կազմակերպության հավատարմագրումը, եթե իր դիտորդներից մեկը սատարում է նախագահական թեկնածուներից մեկին: Սակայն, ԿԸՀ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ չի պատրաստվում կիրառել այս դրույթը և նմանատիպ դեպքերում չեղյալ կհամարի Ընտրական օրենսգիրքը խախտած անհատ դիտորդի հավատարմագրումը:

XII. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԸ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն իր գործունեությունը սկսել է Երևանում 2013 թվականի հունվարի 10-ին՝ մամլո ասուլիս հրավիրելով հաջորդ օրը: Առաքելության ղեկավարը հանդիպել է ԿԸՀ-ի նախագահին, Արտաքին գործերի նախարարին, Արտաքին գործերի փոխնախարարի, Նախագահի անձնակազմի ղեկավարին, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավարին և Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախընտրական առաքելությանը: ԸԴԱ-ն նաև հաստատել է կապ ԿԸՀ-ի, ընտրական գործընթացում ընդգրկված պետական կառույցների, թեկնածուների, քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության և մայրաքաղաքում ու մարզերում գործող լրատվամիջոցների հետ:

ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը (ԵԱՀԿ ԽՎ), Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽԽՎ) և Եվրախորհրդարանը նախատեսում են դիտորդների պատվիրակություններ ուղարկել քվեարկության օրը դիտարկելու համար:

Սույն զեկույցի անգլերեն տարբերակը հանդիսանում է միակ պաշտոնական փաստաթուղթը: Առկա է հայերեն ոչ պաշտոնական թարգմանությունը: